ԱՐՄԱՎԻՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

ՀՏԴ 330.12 (479.25)
ԳՄԴ 65.9 (2Հ) - 94
Ա 910

Ա 910 **Արմավիր: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ձեռքբերումները 2007-2011 թվականներին** / Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն. Եր.: Տնտես. բարեփոխումների վերլուծ. - տեղեկատվական կենտրոն, 2012. - 64 էջ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Արմավիրի մարզում առավել նկատելի ձեռքբերումները՝ տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերը, որոնց շնորհիվ մարզի տնտեսությունն ու հասարակությունը նշանակալի ձեռքբերումներ են ունեցել:

ՀՏԴ 330.12 (479.25)
ԳՄԴ 65.9 (2Հ) - 94

ISBN 978-9939-9065-1-5

© Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, 2012

Կազմին՝ Իրժի Նոսեկ, Սարդարապատ (1984)

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը
Տպաքանակը՝ 3000 օրինակ

Արմավիր

Արմավիրի մարզը Հայաստանի բնակչությամբ ամենամեծ մարզն է, իսկ տարածքով՝ ամենափոքրը. զբաղեցնում է **ՀՀ տարածքի 4.2%-ը**: Նույնքան տեղ է զբաղեցնում մարդու դեմքը մարմնի վրա:

Իրավամբ, Արմավիրը հայոց դեմքն է, որ պարզ ճակատով ու վճիտ աչքերով նայում է Հայոց խորախորհուրդ ամենալեռանը: Նայում է հազարամյակներ շարունակ: Եվ գագաթից ստորոտ աշխարհում ամենաբարձր ու ամենավեհաշուք բիբլիական լեռն ամառ, թե ձմեռ, իր գոյության ամեն վայրկյան օրհնում է արմավիրցու աշխատանքն ու սերը:

Ու թե լեզու առնի Հայոց լեռը մի օր, կպատմի արմավիրցու հեռավոր սերունդներին, թե ինչպես Արարատյան դաշտի անկյունում հիսուն դար առաջ հայն առաջին անգամ իր կամքին ենթարկեց մետաղն[1] ու հիսուն դար անց հնազանդեցրեց ատոմի միջուկը[2]: Լեռը կպատմի, թե ինչպես Արմավիրում՝ Արաքսի ափին, հայը հաստատեց իր պետականությունն ու հիմնեց իր առաջին մայրաքաղաքը, աշխարհում առաջինը քրիստոնեացավ Արմավիրում ու Արմավիրում հիմնեց հայոց առաջին եկեղեցին՝ առաջիններից մեկը ողջ քրիստոնեական աշխարհում: Կպատմի, թե ինչպես Արմավիրի հողն առաջինն ընդունեց տնազուրկ գաղթականին ու նախնիների երկիրն ավերող թշնամու դեմ ծառացավ հայը, ինչպես ընկավ ու հառնեց մոխրից հայը և ինչպես հայը պաշտպանեց իր զավակների ապրելու իրավունքն ու Լեռան օրհնանքի իր բաժինը:

Արմավիրն աշխարհին բացված հայոց դեմքն է: Հայոց համար բախտորոշ շրջադարձերում Արմավիրը եղել ու մնում է առաջինը, հայոց՝ առաջամարտիկը:

---

1 Մեծամորի բլրի լանջին պեղված 5000-ամյա հնության (բրոնզեդարյան) մետաղաձուլարանը

2 21-րդ երկիրն ենք աշխարհում ու երրորդը՝ զարգացող երկրներից (Հնդկաստանից ու Պակիստանից հետո), որ ատոմակայան ենք գործարկել, որում աշխարհում առաջին անգամ գործարկվել են մի շարք նոր տեխնոլոգիաներ:

Մարդիկ

Մարզում է բնակվում **հայաստանցիների 8.8 տոկոսը**՝ ավելին, քան Արագածոտնի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում միասին:

Հայաստանի մարզերում ամենաշատ ծնունդներն Արմավիրում են. 2010 թվականին Արմավիրում ծնվել է նույնքան երեխա, որքան Վայոց Ձորում, Տավուշում ու Սյունիքում միասին վերցրած:

Արմավիրում ավելի շատ երեխա է ծնվել, քան Թուրքիայի Ամասիայի, Արդվինի, Երզնկայի, Բաբերդի, Արդահանի, Իգդիրի և այլ նահանգներում:

Բնակչության թվաքանակը ՀՀ մարզերում 2011թ. տարեսկզբին (հազար մարդ)



2011 թվականին Արմավիրում ծնվել է ավելի շատ երեխա, քան հարևան Թուրքիայի այն նահանգներում, որտեղից մեկ դար առաջ գաղթել են բազմաթիվ արմավիրցիների պապերն ու տատերը:

2011 թվականին ծնվել է **500 երեխա ավելի,** քան 2007 թվականին (2001 թվականի համեմատ՝ **1250** ավել՝ **31 տոկոս աճ**)

2007-2010 թվականներին (չորս տարում) Արմավիրում 100 բնակչի հաշվով

Հայաստանի մարզերից Արմավիրում ամենաբարձր բնական աճն է:

Արմավիրցի Լիպարիտ պապի ու Եղիսաբեթ տատի գերդաստանը Նալբանդյան համայնքում

Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղում Գևորգյանների տոհմը հայտնի է իր խաղաղասեր անդամներով: Գյուղական համեստ բնակարանում 12 հոգի են ապրում՝ մեծով, փոքրով, տղա-հարսով, տատ ու պապով: Եվ ինչպես վկայում են համագյուղացիները, մի օր չեն լսել «մի ձեն, մի ղալմաղալ, մի կռիվ էդ տնից: Իրենց համար ապրում են, աշխատում, մեկին մի թթու խոսք ասած չկան»: Անցած տարի համայնքի ղեկավար Գրիգոր Մկրտչյանը հյուրասենյակի մեծ սեղան էր նվիրել՝ 3 մ երկարությամբ, որ գերդաստանը կարողանա մեկ տեղ հանգիստ ճաշել, ամանորին ու մնացած հանդիսությունների ժամանակ էլ հանգիստ խղճով մարդկանց հյուրընկալել-ճանապարհել:

«Թե չէ խոհանոցի պուճուր սեղանն էինք բերում հյուրասենյակ Նոր տարուն»,– ասում է տան մեծ հարսը՝ Ելենա Կարապետյանը:

Գերդաստանի մեծը՝ 79-ամյա Լիպարիտ Գևորգյանը, 40 տարի քարտաշություն է արել, իր տունն էլ է իր ձեռքերով կառուցել: Տուն է կառուցել, այգի հիմնել, զավակներ մեծացրել: Դավիթ որդին, որ երկու քույրերի միանուագար եղբայր է, պապական սովորույթի ուժով մնաց ապրելու հայրական տանը: 42-ամյա Դավիթի 3 տղա զավակներն ևս պապի հարկի ներքո են: Երեք տղան էլ ծառայել են Հայոց բանակում, նրանցից երկուսն ամուսնացած են ու ամեն մեկը մի-մի ծոռնիկ են հասցրել պարգևել Լիպարիտ պապին ու Եղիսաբեթ տատին:

Լիպարիտ պապի թոռներից 26-ամյա Համբարձումին ամուսնացնելիս հարս ուզելու համար հասել էին Նոր Ամասիա համայնք: Խնամիները չէին առարկել, թեպետ հստակ իմացել էին, որ իրենց աղջիկը հարս է գնալու մի մեծ ընտանիք: 25-ամյա Լիպարիտի կինը Նալբանդյան գյուղից է: Գևորգյանների գերդաստանում հինգ կին է ապրում մի հարկի ներքո՝ առանց որևէ դժգոհության կամ տարաձայնությունների: «Չամուսնացած քույրս էլ է մեզ հետ ապրում,– ասում է Դավիթը,– դե իսկ համերաշխությունը տան մեծից է գալիս: Ինչ տեսել են, էն էլ սովորել են»:

Գևորգյանների ապրուստի հիմնական միջոցը 7 հազար մետր սեփականաշնորհած հողատարածքն ու 1000 մետր տնամերձն է: Դավիթի տղաները նաև օրավարձով աշխատում են գյուղի ֆերմերների մոտ: «Ես ինքս դեմ եմ, որ տղաներս գնան Ռուսաստանում աշխատեն, –ասում է Դավիթ Գևորգյանը,– իմ հայրենիքում, իմ հարազատ գյուղում ինչքան գործ որ կկարողանան ճարել, թող աշխատեն ու իրենք էլ, ճիշտն ասած, ձգտում չունեն դրսերի նկատմամբ: Անպատվաբեր աշխատանք չկա, անպատվաբերն էն է, երբ չես կարողանում ընտանիքդ պահել»:

Դավիթը դեռ փոքր տղային էլ պետք է ամուսնացնի: Ասում է՝ երկու թոռնիկը քիչ է: «Մեր երազանքներից մեկը գյուղում ևս մեկ կամ երկու տուն կառուցելն է, որ շատ չնեղվենք, էդ էլ Աստծո կամոք տղաներս կանեն, մենակ առողջություն լինի»,– ասում է Դավիթը:

Ծնվածների թվաքանակը ՀՀ մարզերում 2010թ. (մարդ)



ծնունդների թիվը ավելացել է ավելի շատ, քան 1998-2006 թվականներին (ինը տարում):

2010-2011 թվականներին Արմավիրում ծնունդների թիվը 1000 բնակչի հաշվով ավելի բարձր էր, քան ողջ հանրապետությունում, ավելի բարձր՝ քան Երևանում և հարևան Վրաստանում:

Արմավիրում մահացության ցուցանիշը ամենացածրերից է հանրապետությունում և շուրջ մեկ երրորդով ավելի ցածր է, քան հարևան Վրաստանում:

Ծնունդների թիվը Արմավիրի մարզում, 1000 բնակչի հաշվով



Բնական աճը Հայաստանի Հանրապետությունում 2010թ. (մարդ)



Ամուսնությունների թիվը Արմավիրի մարզում 2010թ.



2011 թվականին արմավիրցիների թիվն **ավելացել է շուրջ 1,700-ով**, նույնչափ, որքան Լոռու, Սյունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերը միասին վերցրած:

2010 թվականին 2002 թվականի համեմատ Արմավիրի բնական աճը կրկնա-

Ամուր է արմավիրցու ընտանիքը: Ամուսնալուծությունների թիվը հազար բնակչի հաշվով Արմավիրում շուրջ մեկուկես անգամ քիչ է, քան հանրապետությունում և շուրջ երկու անգամ պակաս, քան Երևանում:

պատկվել է: 2011 թվականին 2006 թվականի համեմատ բնական աճն Արմավիրում ավելացել է ավելի քան **40 տոկոսով**:

Մինչև մեկ տարեկան երեխաների մահացության ցուցանիշը կենսամակարդակի բարձրացման կարևորագույն ցուցանիշ է: Մանկական մահացությունը Արմավիրում **ամենացածրերից է ողջ տարածաշրջանում**: 2010 թվականին այն ավելի ցածր էր, քան մահացության միջին ցուցանիշը հանրապետությունում, ավելի ցածր, քան Վրաստանում (11.2՝ 1000 կենդանածնի հաշվով) և Ադրբեջանում (11.2), ավելի ցածր, քան Ադրբեջանի քաղաքային բնակավայրերում և Թուրքիայում (ավելի քան 20 տոկոսով):

Ամուսնալուծությունների թվի հարաբերությունը ամուսնությունների թվին ՀՀ մարզերում, 2010թ.



2010 թվականին Հայաստանի մարզերում գրանցված ամուսնությունների ամենամեծ թիվը Արմավիրի մարզում էր՝ **1744 ամուսնություն՝** ավելի շատ, քան Սյունիքում և Արագածոտնում միասին վերցրած: Հանրապետությունում յուրաքանչյուր տասներորդ նորապսակ արմավիրցի է:

Եթե 2010 թվականին հանրապետությունում 1000 բնակչի հաշվով ամուսնությունների թիվը **5.53** էր, իսկ Երևանում՝ **5.97**, ապա Արմավիրում գրանցվել է հանրապետության **ամենաբարձր ցուցանիշը՝ 6.14**:

Արմավիրում ամուսնությունների թիվը 2010 թվականին 1998 թվականի համեմատ կրկնապատկվել է:

Իրավամբ, Հայաստանում ամենաամուր ամուսնական զույգերն Արմավիրում են. ամուսնությունների թվի համեմատ ամուսնալուծությունների թիվը Արմավիրում ամենացածրն է ողջ հանրապետությունում:

Եթե հարևան Ադրբեջանում հարյուր ամուսնությանը բաժին է հասնում ավելի քան **11.4**, Վրաստանում՝ **13.6**, իսկ Թուրքիայում՝ ավելի քան **20** ամուսնալուծություն, ապա Արմավիրում հարյուր ամուսնությանը բաժին է ընկնում ընդամենը ինը ամուսնալուծություն:

Արմավիրցին նվիրված է իր հողին ու ջրին: Ամուր է նրա կապը հայրենի օջախի հետ:

2007-2010 թվականներին (4 տարում) Արմավիրի մարզ են վերադարձել այնքան բնակիչներ, որքան 1998-2006 թվականներին (9 տարում): Այդ տարիներին **Արմավիր են վերադարձել ավելի շատ հայաստանցիներ**, քան Հայաստան են վերադարձել հետպատերազմյան երկու տարիներին՝ 1996-1997 թվականներին միասին:

Մեկնողների և եկողների թվաքանակը Արմավիրի մարզում (մարդ)



Ընդ որում 2007-2010 թվականներին Արմավիրից մեկնածների և վերադարձողների թվաքանակները հավասար են:

Արմավիրի մարզը հանրապետության թվով երկրորդ ամենաանվտանգ մարզն է:

Բնապահպանության օրենսդրության խախտումների թիվն Արմավիրում 2011 թվականին 2001 թվականի համեմատ նվազել է **ավելի քան երեք անգամ**:

10 հազար բնակչի հաշվով հանցագործությունների թիվը Արմավիրում երկու անգամ ավելի պակաս է, քան Երևանում, ավելի քան մեկուկես անգամ ցածր է միջին հանրապետական ցուցանիշից և երկուսուկես անգամ պակաս է, քան հարևան Վրաստանում:

Հայաստանում 2011թ. գրանցված հանցագործությունների քանակը, 10,000 բնակչի հաշվով



Հինգ անձից բաղկացած Վարդանյանների ընտանիքում Սուրենը եղբայրներից ավագն է: Արդեն չորրորդ տարին է զբաղված է ջերմոցային տաղավարների կառուցման աշխատանքներով: Երեք եղբայրներից կրտսերը ծառայում է հայկական զինված ուժերում, իսկ միջնեկը՝ ՌԴ-ում է: Եղբայրներից և ոչ մեկն ամուսնացած չեն: Սուրենն ասում է, որ հիմնական խնդիրն եղել է աշխատանք չունենալը Էջմիածնի տարածաշրջանի Տնկարան գյուղում, որտեղ բնակվում է իր ընտանիքը: Դա Վարդանյանների եկամտի հիմնական աղբյուրն է: Մշակում են հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաներ՝ սեփական օգտագործման համար:

Սուրենն ամիսը հարյուր հազար դրամ աշխատավարձ է ստանում: «Ամենակարևորը, որ ծնողիցս այլևս գումար չեմ ուզում ու արդեն կարող եմ մտածել նաև ընտանիք կազմելու մասին: Ռուսաստանում աշխատելու մասին այլևս չեմ մտածում,— ասում է Սուրենը,— մտածում եմ հետագայում, երբ եղբայրս ավարտի ծառայությունը, վստահ եմ, նրա համար էլ այստեղ աշխատանք կճարվի»:

Բնապահպանության օրենսդրության խախտումների քանակը Արմավիրի մարզում (միավոր)



Տնտեսության սյուները

Արմավիրը նորանկախ Հայաստանի պարենի շտեմարանն է եղել երկու տասնամյակ՝ դառնալով երկրի պարենային անվտանգության երաշխավորներից մեկը: Քսան տարիների գումարային գյուղատնտեսական արտադրանքով Արմավիրի մարզը հանրապետությունում առաջինն է (նաև 2007-2010 և 1998-2001 թվականներին): Չնայած ֆինանսատնտեսական ճգնաժամին՝ Արմավիրի մարզը 2007-2011 թվականների հինգ տարիներին տվել է **գրեթե նույնքան գյուղատնտեսական արտադրանք** (անվանական արժեքով), որքան 1998-2006 թվականների ինը տարիներին:

Արմավիրցին ստանում է նույնքան բերք, որքան Արագածոտնի, Սյունիքի, Լոռու, Տավուշի և Կոտայքի մարզերը միասին:

Բերրի է Արմավիրի հողը, իսկ նրա մշակը՝ հմուտ: Մեկ հեկտարից արմավիրցին **ավելի շատ բերք է ստանում,** քան միջինում ստանում են թուրք, վրացի և ադրբեջանցի գյուղատնտեսները:

Արմավիրի մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2011 թվականին 2001 թվականի համեմատ ավելի քան կրկնապատկվել է (անվանական արժեքով):

Մարզի բնակչության շուրջ **65%**-ն ընդգրկված է շուրջ **52,300** գյուղացիական տնտեսություններում:

Նախորդ երկու տասնամյակում նվազ շահավետ հացահատիկայիններից աստիճանական անցում է կատարվել առավել շահավետ մշակաբույսերի՝ խաղողի, պտղի և բանջարեղենի:

Բոստանային մշակաբույսերի համախառն բերքը ՀՀ մարզերում 2011թ.



Գյուղատնտեսության համախառն արտադրանքը ՀՀ մարզերում 2011թ. (մլրդ. դրամ)



Արմավիրում 2010 թվականին 2000 թվականի համեմատ պտղատու այգիների տարածքը կրկնակի ավելացել է:

2010 թվականին 1998-2000 թվականի համեմատ մարզում մեկ երրորդով ավելացել են բանջարեղենի ցանքատարածությունները: 2010 թվականին 1998 թվականի համեմատ **1.5 անգամ ավելացել են** խաղողի տնկարկները:

Բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունների շուրջ **70 տոկոսը** գտնվում է Արմավիրի մարզում: 2011 թվականին Արմավիրն ապահովել է Հայաստանում **բոստանային մշակաբույսերի համախառն արտադրանքի գրեթե երկու երրորդը**:

2011թվին Արմավիրում արտադրվել է գրեթե նույնքան խաղող, որքան 1998 թվականին ողջ հանրապետությունում:

2000 թվականին Արմավիրում մշակվող տասը հեկտարից մեկը բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածություններ էին, մեկը՝ խաղողի, իսկ կեսը պտղատու այգիներ էին:

Խաղողի համախառն բերքը (հազ. տոննա, արտաքին շրջան) և տնկարկների տարածությունները (հա, ներքին շրջան) ՀՀ մարզերում 2010թ.



2010 թվականին մշակվող տասը հեկտարից երկուսը պտղատու այգիներ են, երկուսը՝ խաղողի տնկարկներ և երկուսը՝ բանջարանոցային ցանքատարածություններ (երեքը միասին՝ ցանքատարածությունների շուրջ **60 տոկոսը**):

1998 թվականի համեմատ՝ խաղողի արտադրանքը 2011 թվականին

Արմավիրը Հայաստանի թիվ մեկ խաղող մշակողն է:

Խաղողի համախառն բերքը Հայաստանում 1998 և 2011թթ. (հազ. տոննա)



Բանջարանոցային մշակաբույսերի համախառն բերքը ՀՀ մարզերում 2011թ. (հազ. տոննա)



ավելացել է **երկուսուկես անգամ**, իսկ բանջարեղենի արտադրանքը կրկնապատկվել է:

Հայաստանի ամենափոքր տարածքով մարզում են գտնվում խաղողի ամենամեծ տնկարկները՝ **կրկնակի ավելի**, քան Տավուշում, Լոռիում, Վայոց Ձորում, Սյունիքում, Գեղարքունիքում, Կոտայքում, Արագածոտնում և Երևանում միասին վերցրած (նշվածների ընդհանուր տարածքը Արմավիրի մարզի տարածքից քսան անգամ մեծ է):

Խաղողի բերքահավաքը Արմավիրի մարզում

2007-2011 թվականների հինգ տարիներին Արմավիրում արտադրվել է նույնքան խաղող, որքան 1998-2006 թվականների ինը տարիներին:

2011 թվականին Հայաստանում խաղողի 10 տնկարկներից 4-ը Արմավիրում էր, իսկ հավաքված խաղողի 10 վազերից 4-ը՝ արմավիրցու մշակածը (**44 տոկոս՝** ըստ համախառն բերքի կշռի):

Արմավիրը թիվ մեկ բանջարեղեն արտադրողն է Հայաստանում:

Հայաստանում բանջարեղենի համախառն բերքի շուրջ **40** տոկոսը աճեցվում է Արմավիրում: Արմավիրում են բանջարանոցային մշակաբույսերի Հայաստանում ամենամեծ ցանքատարածությունները:

2011 թվականին 1998 թվականի համեմատ բանջարեղենի համախառն բերքն Արմավիրում կրկնապատկվել է:

2011 թվականին Արմավիրի մարզում բանջարեղենի համախառն բերքն ավելի շատ էր, քան 1998 թվականին հանրապետության մյուս բոլոր մարզերում միասին վերցրած:

Խոզերի գլխաքանակը ՀՀ մարզերում 2011թ. (հազ. գլուխ)



Արմավիրում խոզերի ամենամեծ գլխաքանակն է:

1998 թվականի համեմատ՝ խոզերի գլխաքանակը 2011 թվականին **աճել է 2.5 անգամ**:

2011 թվականին Արմավիրը Հայաստանում հավկիթի թիվ մեկ արտադրողն է:

2007-2011 թվականներին Արմավիրում արտադրվել է **1.5 անգամ ավելի շատ** հավկիթ, քան 1998-2006 թվականներին: 2010-2011 թվականներին Արմավիրում արտադրվել է ավելի շատ հավկիթ, քան 1998 թվականին ողջ հանրապետությունում: Հայաստանում յուրաքանչյուր հինգերորդ հավկիթը արտադրվում է Արմավիրում:

Հավկիթի արտադրությունը ՀՀ մարզերում 2011թ. (մլն. հատ)



2011 թվականին Արմավիրի մարզում արտադրվել է գրեթե **նույնքան կաթ, որքան կազմել է Տաջիկստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղրղզստանի և Մոլդովայի կաթնամթերքի արտադրությունը 1997 թվականին միասին վերցրած**: Եվ սա այն դեպքում, երբ անասնապահությունը Արմավիրի մարզի հիմնական ուղղությունը չէ:

Արմավիրի տնտեսության նվաճումները արմավիրցու քրտնաջան աշխատանքի արդյունքն են: Արմավիրի մարզի և հանրապետության տնտեսության խնդիրների արդյունավետ փոխկապակցումը, ինչպես նաև մարզի համար կենսական խնդիրների լուծման գործում պետության, գործարարների ու հասարակության ջանքերի համատեղումը այդ նվաճումների կարևոր նախապայմաններն էին:

Արմավիրցիների բարեկեցիկ ապագան խարսխված է մարզում գյուղատնտեսության հեռանկարների, ենթակառուցվածքների ու կապիտալ ծրագրերի, բուսաբուծության նոր տեխնոլոգիաների ու գիտելիքահեն մասնավոր ներդրումների վրա:

Հստակ գիտակցմամբ, որ գյուղատնտեսության զարգացումը Արմավիրի մարզում ճգնաժամի հետևանքների հաղթահարման և հետագա սոցիալ-տնտեսական զարգացման հիմքն է՝ ՀՀ կառավարությունը 2007-2011 թվականներին ներդրումային մեծածավալ աշխատանքներ է իրականացրել:

Կապիտալ ծրագրերի կիզակետում կառավարությունը դրել է մարզի ոռոգման համակարգերի զարգացումը. Արմավիրի մարզում իրականացված ներդրումային ծրագրերի ավելի քան 40 տոկոսն ուղղվել է շուրջ 24 հազար հեկտար հող սպասարկող ոռոգման համակարգի վերականգնմանն ու զարգացմանը: Ավելի՛ն, հանարապետության բոլոր մարզերում ոռոգման համակարգերի զարգացմանն ուղղված ներդրումային կապիտալ ծրագրերի գրեթե 35 տոկոսը ՀՀ կառավարությունն ուղղել է հենց Արմավիրի մարզ:

Արմավիրի մարզում 2007-2011 թթ. իրականացված կապիտալ ծրագրերն՝ ըստ ոլորտների



Արմավիրի մայր ջրանցքը 2300 հա հողերի ոռոգման հնարավորություն տվեց

Արմավիրի մայր ջրանցքի վերականգնումը նախկինում անջրդի շուրջ 2,300 հեկտար սեփականաշնորհված գյուղատնտեսական հողերի ոռոգման հնարավորություն է ընձեռում:

2007-2011 թվականների հինգ տարիներին Արմավիրի մարզում ոռոգման համակարգի կառուցման, կատարելագործման և վերականգնման աշխատանքների ծավալը **գերազանցել է** Լոռու, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում նույն ոլորտում իրականացված աշխատանքների ծավալները միասին վերցրած:

2007-2011թթ. ոռոգման համակարգի ոլորտում իրականացված կապիտալ ծրագրերը ՀՀ մարզերում (մլն. դրամ)



2007-2011 թվականներին Արմավիրի մարզում ոռոգման համակարգերի վերականգման շուրջ **11.4 միլիարդ դրամ** ընդհանուր արժեքով ծրագրերից շահել են մարզի **97 համայնքներից 83**-ը:

Մեծապես վերականգնվել են Թալինի և ստորին Հրազդանի մայր ջրանցքները, վերջինը սպասարկում է **36.000 շահառուի՝ 10,000 հեկտար** հողատարածքում:

Գործարկվել է Շենիկի ոռոգման ինքնահոս համակարգը, որի շնորհիվ ոռոգելի հողատարածքներն ավելացել են **500** հեկտարով՝ գրեթե կրկնակի ավելացնելով ոռոգելի հողերի մակերեսը: Մարզի շատ **համայնքներում հորատվել են խորքային, արտեզյան և ռեզերվային հորեր, կառուցվել են կոլեկտորա-**

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը և Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը՝ մայր ջրանցքի բացման արարողությանը

դրենաժային ցանցեր, վերականգնվել են ներտնտեսային ջրանցքներ ու պոմպակայաններ, վերանորոգվել է Արաքս գետի ափապաշտպան համակարգը մարզի մի շարք համայնքների տարածքում:

Անկախության առաջին տասնամյակում, պատմության էջերին թողնելով գյուղատնտեսության խորհրդային համայնական-կոլեկտիվ տնտեսվարումը, արմավիրցին հայտնվեց նոր մարտահրավերների առջև: Իր իսկական տիրոջը՝ մշակին տրվեց հողը, որից բաժանվել էր ավելի քան 70 տարի առաջ. 1997 թվականին Հայաստանի գյուղերի բնակչության ավելի քան 80 տոկոսը հողի սեփականատեր դարձավ: Սակայն, նոր-նոր ոտքի կանգնող գյուղացիական տնտեսությունները տքնում էին գաճաճ հողակտորների վրա: Սեփականատերերի շուրջ կեսն ուներ 1 հեկտարից պակաս հող, իսկ 4 գյուղացիական տնտեսություններից երեքն ունեին երկու հեկտարից պակաս հողատարածություն, որոնք հաճախ տրոհված էին մի քանի հողակտորների, որոնց միջին չափը կես հեկտար էր: Գյուղատնտեսական հնացած տեխնոլոգիաների պայմաններում ինտենսիվ երկրագործությամբ, հարթավայրային գոտու թանկարժեք մշակա-

«Մայր ջրանցքը վերանորոգելուց հետո ջուր մշտապես կա, ջրի կորուստ չունենք, գոհ ենք: Ջուրն որ կա, մարդիկ էլ ձգտում են ստեղծել, շատացնել այգիները: Մենք, օրինակ, այգեգործությամբ ենք զբաղվում և հիմա մտածում ենք ավելացնել տնկիների թիվը»:

Նորայր Թովմասյան, Արմավիրի մարզ

բույսերի մշակմամբ ապրող մարզի համար նման իրողությունը սահմանափակում էր զարգացման հնարավորությունները:

Անկախության երկրորդ տասնամյակում Արմավիրի մարզն աստիճանաբար գրավիչ դարձավ գյուղմթերքների արտադրության ոլորտում ներդրումների համար: 2007-2011 թվականներին մարզում մասնավոր ներդրումների արդյունքում ստեղծվեցին գյուղմթերք արտադրող մի շարք կարևոր մասնավոր ձեռնարկություններ: Նախաձեռնությունը վերջնականապես անցավ մասնավորին, մինչդեռ պետությունն իր վրա վերցրեց ենթակառուցվածքների և գործարար միջավայրի զարգացման բեռը: Արմավիրի մարզում նորարարական տեխնոլոգիաների ներդրման հիման վրա ստեղծվեցին Հայաստանում և ողջ տարածաշրջանում նմանակը չունեցող մի շարք ձեռնարկություններ:

Արմավիրի մարզում գտնվող **«Տիեռաս դե Արմենիա» («Հայաստանի հողեր»)** ՓԲԸ-ն Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում մեծածավալ ներդրումներ կատարող խոշորագույն արտասահմանյան ընկերություններից է, որը խաղողի այգիների մշակության գերժամանակակից տեխնոլոգիաներ է ներմուծել Հայաստան, ինչը կարևորվում է մարզում, Հայաստանում և ողջ տարածաշրջանում խաղողագործության նոր մշակույթի և արդյունավետ տեխնոլոգիաների տարածման ու եկամտաբերության բարձրացման առումով: Ընկերությունը Բաղրամյան և Արևադաշտ գյուղերի հարևանությամբ գտնվող շուրջ **2,300 հա** անմշակ հողատարածքի **80 տոկոսն** աստիճանաբար վերածում է մշակովի տնկարկների: Շուրջ **37 միլիոն ԱՄՆ դոլար** ներդրումների արդյունքում ընկերությունը խաղողի 25 տեսակ է մշակում **400 հեկտար** տարածության վրա և մշակելի հողատարածքները տարեցտարի ավելացնելու է ավելի քան **100 հեկտարով**: Ընկերությունն ունի գինու արտադրության հոսքագիծ, գինու սեփական արտադրատեսակ և ավելացնում է նոր տնկիներ՝ կոնյակի վերամշակման նպատակով: «Տիեռաս դե Արմենիան» շունչ ու կյանք է տվել հազարամյակներ շարունակ անմշակ ու քարքարոտ խոպանին՝ հարյուրավոր արմավիրցիների ապահովելով եկամտաբեր աշխատանքով:

Վաղարշապատի Արևաշատ համայնքում շահագործման է հանձնվել **«Արաքս թռչնաֆաբրիկա»** ընկերությունը՝ մսատու թռչնի մայրական հոտի աճեցման և պահպանման համալիրն ու կիսաֆաբրիկատների նոր արտադրամասը, նո-

Ֆրանսիական խաղողի տնկարկները նոր հայրենիքում. «Տիեռաս դե Արմենիայի» այգիները Արմավիրում

Նախկին քարքարուտներն արմավիրցու քրտինքով դառնում են տնկարկներ

ռակառույց թռչնանոցն ու ինկուբատորները զինելով եվրոպական ժամանակակից ավտոմատացված կառավարման համակարգերով: Շուրջ **10 միլիոն ԱՄՆ դոլար** ծավալով ներդրումները մինչև 2012 թվականի ավարտը հնարավորություն կընձեռեն տարեկան արտադրել շուրջ **11 հազար տոննա** թռչնամիս՝ Հայաստանում թռչնամսի պահանջարկի շուրջ 65 տոկոսը, և շուրջ **25 միլիոն հավկիթ՝** երկրում հավկիթի պահանջարկի **60-65 տոկոսը**:

Արմավիրը Հայաստանի թիվ մեկ սունկ արտադրողն է: Էջմիածնում 2009 թվականից գործող **«Բիգա»** հայ-հոլանդական ընկերության ջերմոցներում հոլանդական գերժամանակակից տեխնոլոգիաներով, Հոլանդիայից ներկրվող բարձրորակ հումքից, ամբողջովին ավտոմատացված կառավարման համակարգերի խնամքով ու հսկողությամբ աճեցվում և փաթեթավորվում է եվրոպական չափանիշներին բավարարող, Հայաստանի էկոլոգիապես ամենամաքուր սունկը: Ներկայում ընկերությունը օրական արտադրում է միջինում մեկ տոննա շամպինիոն, որի շուրջ **40 տոկոսն արտահանվում է** արտերկրի շուկաներ: Մինչև 2012 թվականի ավարտը ընկերությունը նախատեսում է կառուցել սնկի աճեցման երկրորդ գործարանը, որը սնկի արտադրական հզորությունը կհասց-

«Արևադաշտ համայնքի հողերն անջրդի էին: Դրանք չէին մշակվում անգամ խորհրդային տարիներին: Շուրջ 45 տարի գյուղացու ձեռքն այդ տարածքներին չէր կպել, նույնիսկ, որպես արոտավայր չէր ծառայել: Ամենամեծ խնդիրն էստեղ ջրամբարի կառուցումն էր: Դա էր, որ պիտի փրկեր հողերը անապատացումից: Դա էր, որ գյուղացուն պիտի վերադարձներ իր հարստությունը: 2006թ-ին կառուցվեց 90 հազար խմ ջրատարողությամբ ջրամբար»,– պատմում է Գևորգ Աբրահամյանը:

«Դրվեց կաթիլային եղանակով ջրելու՝ ուրեմն նոր մի եղանակ, որ ջուրը խնայողաբար օգտագործելու հնարավորություն էր ընձեռում: Այդ տարածքներում ջրի հետ կապված խնդիրը մեծ էր և բնականաբար նոր մեթոդի կիրառումը ոչ միայն խնայողություն, այլև արդյունավետություն պիտի ապահովեր, ու ասեմ, որ ներկայում ապահովում է 100 տոկոսով: Աշխատողների համար ստեղծված են հարմարավետ պայմաններ, կառուցվել են բնակելի շինություններ: Ստեղծվել է հսկայական ինֆրաստրուկտուրա: Առաջին փուլում տնկվեցին խաղողի մեր տեխնիկական սորտերը և փորձնական հատուկ սորտեր:

Այսօրվա դրությամբ ջրամբարներն արդեն երկուսն են, մեծացել, ընդարձակվել են այգիների տարածքները, իսկ դա նշանակում է՝ նոր աշխատատեղեր: Ավելանում է կայուն եկամուտ ունեցողող ընտանիքների թիվը, որովհետև միայն արևադաշտցին չի այդտեղ աշխատում, հարևան համայնքներից էլ կան աշխատողներ: Եվ սեզոնին 300-400 մարդ ապահովվում է աշխատանքով: Հնարավոր է ապագայում, բացի խաղողից այլ մշակաբույսեր էլ մշակվեն:

Սա բոլորովին այլ մոտեցում է գյուղատնտեսությանը, գյուղացուն: Սա հողերը անապատացումից փրկելու մեծ քայլ էր»:

«Բիգա» ընկերության ավտոմատ կառավարվող ջերմոցները Արմավիրի մարզում

Ոռոգման նորագույն տեխնոլոգիաները Արմավիրի ջերմոցներում

նի տարեկան ավելի քան **700 տոննայի**: Ընկերությունն Արմավիրում կառուցում է ողջ տարածաշրջանում միակ կոմպոստի արտադրության գործարանը, որը հարևան երկրների սունկ արտադրողներին կապահովի որակյալ կոմպոստով: 2012 թվականի տարեսկզբին «Բիգան» գործարկեց լոլիկի, վարունգի և պղպեղի ավտոմատացված կառավարմամբ գերժամանակակից մեծ հզորության ջերմոցներ, որտեղ լոլիկի բերքատվությունը Հայաստանի համար աննախադեպ է՝ **40-50 կգ՝ մեկ քառակուսի մետրից**:

Հայ-հոլանդական **«Ամստեր Ֆլաուերս»** ընկերությունը ավտոմատ կառավարման ամենաժամանակակից տեխնոլոգիաների և եվրոպական սարքավորման կիրառմամբ աճեցնում է առողջ վարդերի 100-ից ավելի տեսականի, մշտադալար բույսերի, պտղատու ծառերի, միամյա և բազմամյա բույսերի, ինչպես նաև սենյակային էկզոտիկ բույսերի 200-ից ավելի տեսակներ ու ծաղիկների սերմեր:

Բաղրամյան շրջանի Վանանդ համայնքում **«Նոյան»** պտուղ-բանջարեղենի վերամշակման եվրոպական չափանիշներին համապատասխանող բարձր տեխնոլոգիաներով ու ավտոմատ կառավարման համակարգերով զինված գործարանը 2012 թվականի ամռանը կհամալրի հանրապետությունում բնական հյութերի արտադրության հզորությունները, կարտադրի մանկական սննդի արտադրության համար անհրաժեշտ խյուսեր և խտանյութեր, տոմատի և կարմիր պղպեղի մածուկ: Գործարանը կառուցում է մրգերի, բանջարեղենի վերամշակման ու բնական հյութերի պատրաստման ՀՀ առաջատար **«Եվրոթերմ»** ընկերությունը, որի շրջանառությունը 2010 թվականին կազմել է շուրջ **2.7 միլիարդ դրամ**: Պահանջարկի աճի դեպքում ձեռնարկության արտադրական հզորությունները, պահեստային տարածքները հնարավորություն են ընձեռում կրկնապատկել արտադրության ծավալները:

Արմավիրում գործող **«Լևոն» ՍՊԸ**-ն «Դալարիկ» ապրանքանիշով արտադրում է շուրջ 20 անուն պահածոներ՝ արտահանելով արտադրանքի շուրջ 90%-ը: 2011 թվականին գործարանում մթերվել է **1500 տոննա միրգ** և բանջարեղեն, արտադրվել է **350 հազար պահածո՝** 2009 թվականի համեմատ կրկնապատկելով արտադրության ծավալները: Ձեռնարկությունում միջին աշխատավար-

«ՄԱՊ» ընկերության արտադրական հզորություններն աճում են



«Մուսալեռ տպագրատան» գերժամանակակից սարքավորմամբ հագեցված արտադրամասում

ձը շուրջ **110 հազար դրամ** է: 2012 թվականին գործարանը նախատեսում է կրկնակի ավելացնել աշխատատեղերը:

Ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրական ձեռնարկությունները որակյալ աշխատատեղերով են ապահովում արմավիրցիներին՝ հոգալով նրանց վերապատրաստման ծախսերը եվրոպական լավագույն կենտրոններում:

Անկախության երրորդ տասնամյակ Արմավիրի մարզը մուտք է գործում նոր տեխնոլոգիաների հնարավորություններով և գյուղատնտեսական նոր մշակույթի հեռանկարներով:

Արմավիրի մարզի առավել կարկտավտանգ և գյուղատնտեսական ինտենսիվ մշակվող հողատարածքները կարկտահարումից պաշտպանելու նպատակով մարզի մի շարք համայնքներում, մասնավորապես՝ Այգեշատ, Արշալույս, Բերքաշատ, Շենավան, Քարակերտ, Վանանդ, Շենիկ և Ծաղկալանջ համայնքներում, տեղադրվել է **հեռահար կառավարմամբ 15 միավոր «Զենիթ» հակակարկտային կայան:**

Արմավիրի մարզի մեծ թվով համայնքներ պարբերաբար նախկինում տուժում էին կարկտահարումից: Մարզի գյուղացիական տնտեսությունների, ցանքատարածությունների, տնկիների ու այգիների կարկտահարումը զգալի վնասներ էր պատճառում բերքին: Ներկայում տեղակայված հակակարկտային կայանների արդյունավետությունը կարկուտի դեմ պայքարում գրեթե բացար-

«Տեսաբանից վերածվեցի կրկին պրակտիկի, երբ եկա «Բիգա»՝ հայ-հոլանդական ընկերության ջերմոցներում աշխատելու»,— ասում է Երևանի ագրարային համալսարանի դասախոս Արամ Ասատրյանը: Մասնագիտությամբ գյուղատնտես է, տնտեսական գիտությունների թեկնածու, տասներկու տարի դասավանդել է Երևանի ագրարային համալսարանում՝ բուսաբուծության ամբիոնում: Երեք ամիս է, ինչ դասախոսի պորտֆելը դրել է մի կողմ և ուշի ուշով հետևում է ջերմոցային պայմաններում աճող բույսերի խնամքին ու վերարտադրությանը:

Ըստ Արամ Ասատրյանի՝ արտադրությունն այն ոլորտն է, որտեղ կա մշտական զարգացում: Ընկերությունում աշխատելու հրավերն ընդունել է՝ հենց այս հանգամանքը հաշվի առնելով: «Բացի այդ էլ պրակտիկան ինձ ավելի հոգեհարազատ է, քան թեորիան, քան իմ նախկին աշխատանքը, որ անում էի,-խոստովանում է նախկին դասախոսը,- դասավանդելու պարագայում, ոնց որ մարդու մոտ անընդհատ լճացման պրոցես գնա: Բացի դրանից, կար նաև գումարային խնդիր: «Բիգա» ընկերությունում ավելի շատ են վճարում: Ստացվում է, որ դու հաճելին համատեղում ես օգտակարի հետ: Կատարում ես աշխատանք, որ քո սրտովն է և նորմալ վարձատրվում ես»:

Արամը խոստովանում է, որ տասը տարի առաջ ԱՄՆ տեղափոխվելու հնարավորություն է ունեցել, սակայն որոշել է մնալ Հայաստանում: Հիմա, երբ ունի նման հետաքրքիր աշխատանք, համոզվել է, որ որոշումը ճիշտ էր:

ձակ է՝ հակակակրտային կայանների միջոցով մթնոլորտի վրա ուղղահայաց տարածվող մեծ ուժգնության հարվածային ալիքների ազդեցության շնորհիվ, ինչը հնարավորություն կընձեռի այլևս խուսափել բնության քմահաճույքի պատճառած վնասներից:

Հայաստանյան առաջատար **Բարվա** ինովացիոն կենտրոնի արտադրած կայանների հեռահար կառավարումն իրականացվում է **ՎիվաՍել-ՄՏՍ-ի** ցանցի միջոցով, Հայաստանի գյուղատնտեսության մեջ կիրառելով բարձր տեխնոլոգիաներ՝ **3G և GPRS/EDGE համակարգերով կապի ընդարձակ ծածկույթ**: Կարկտահարությունից տուժած գյուղացիների հոգսը թեթևացնելու նպատակով, կառավարությունն առանձին դեպքում նաև սառեցրել է գյուղացիական տնտեսությունների կողմից ստացված վարկերի մարումը:

Արմավիրում զարգացել է մշակող արդյունաբերությունը. 2011 թվականին Արմավիրի մարզում մշակվել է **ավելի շատ արտադրանք**, քան 2001 թվականին Տավուշի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արագածոտնի մարզերում միասին վերցրած:

2008-2011 թվականների չորս տարիներին Արմավիրում մշակող արդյունա-

Մշակող արդյունաբերության արտադրանքը Արմավիրում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



2011 թվականին Արմավիրի մշակող արդյունաբերության ծավալը 2001 թվականի ծավալի եռակին է:

Դեռևս վեց տարի առաջ մարզում կատարված ներդրումների ծավալները նկարագրվում էին եռանիշ թվերով: 2006 թվականից սկսած՝ ներդրումների ծավալները մարզում գնահատվում են միլիարդներով:

բերության ծավալը կազմել է գրեթե նույնքան, որքան 2001-2007 թվականների յոթ տարիներին:

Հանրապետության թղթի և թղթե արտադրատեսակների կեսից ավելին արտադրվում է Արմավիրի մարզում:

2007-2009 թվականներին մասնավոր ներդրումների շնորհիվ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գործում է Հայաստանում և տարածաշրջանում բարձրորակ ռուլոնային տպագրության շուկայում փաթեթավորման արտադրության թիվ մեկ ձեռնարկությունը՝ **«Մուսալեռ Տպագրատունը»**, որը հագեցած է ռուլոնային թվային տպագրության և լազերային հատման բարձր արտադրողականության եզակի սարքավորումներով: Գերժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած այս ձեռնարկությունը ոչ միայն բավարարում է Հայաստանում պիտակների շուկայի պահանջարկի **90 տոկոսը**, այլև արտադրանք և ծառայություններ է արտահանում արտերկրի շուկաներ:

Արմավիրի մարզի Մերձավան համայնքում 2009 թվականից գործում է Հարավային Կովկասում խոշոր տրամաչափի խողովակներ արտադրող եզակի հայ-սիրիական համատեղ **«Պոլիմեր տրուբ»** ձեռնարկությունը: Շուրջ **58 միլիոն ԱՄՆ դոլար** ծավալով ներդրումների արդյունքում, գործարանն արտադրում է 800-ից 1400 մմ տրամաչափերի խողովակներ՝ լիարժեքորեն բավարարելով հիդրոէներգետիկայում և ոռոգման համակարգում կիրառվող խոշոր տրամաչափի խողովակների պահանջարկը հանրապետությունում, ինչպես նաև իր արտադրանքն արտահանում է արտերկրի շուկաներ: 15 մթնոլորտ ճնշմանը դիմացող խողովակների շահագործման երաշխիքային նվազագույն

«ՄԱՊ» ընկերության արտադրական հզորություններն աճում են

ժամկետը 50 տարի է, որից հետո գործարանը լիովին վերամշակելու է օգտագործված խողովակները՝ ապահովելով անթափոն արտադրության 100-տոկոսանոց շրջանառություն, ինչը բնապահպանական առումով աննախադեպ է մեր երկրում և տարածաշրջանում:

Արմավիրի մարզի Լենուղի համայնքում է գործում գյուղատնտեսական մթերքների վերամշակման հանրապետության խոշորագույն ձեռնարկություններից մեկը՝ **ՄԱՊ**-ը: Ժամանակակից գինեգործական մեքենաներով, եվրոպական արտադրության բարձրակարգ տարողություններով, պահածոյացման ավտոմատ կառավարման տեխնոլոգիաներով հագեցած, բարձրակարգ մասնագետների կողմից կառավարվող ձեռնարկությունն իր արտադրանքն արտահանում է բազմաթիվ երկրներ: ՄԱՊ-ը կարող է արտադրել տարեկան **տասնչորս միլիոն լիտր** բարձրակարգ ալկոհոլային խմիչք, ինչպես նաև տոմատի մածուկ ու մարինադներ: Գործարանը պայմանագրեր ունի մարզի շուրջ երեք հազար ֆերմերային տնտեսությունների հետ: Վաղ գարնանը ձեռնարկությունը ֆերմերների հետ կնքում է բերքի մթերման վերաբերյալ անհատական պայմանագրեր և նրանց օժանդակում պարարտանյութով, բուժանյութով, առաջարկում վարկային միջոցներ՝ զրոյական տոկոսադրույքով: Ձեռնարկության արտադրական հզորությունները թույլ են տալիս մթերել մինչև **քսան հազար տոննա խաղող**՝ գինու և կոնյակի համար և քառասուն հազար տոննա պտուղ-բանջարեղեն՝ պահածոների արտադրության համար: 2011 թվականին ՄԱՊ-ը մթերել է **4,500 տոննա խաղող** և շուրջ **10 հազար տոննա լոլիկ**՝ գրեթե **կրկնակի ավելի**, քան

2010 թվականին, ընդ որում խաղողի բերքի մեկ կիլոգրամը 2011 թվականին գործարանը ընդունել է **130 դրամով**՝ 2010 թվականի 120 դրամի փոխարեն:

Արմավիրի հաստոցաշինական գործարանն արտադրում է մինչև 9 կգ ձուլածո դետալներ, որի համար ունի ՀՀ-ում եզակի համարվող՝ գերճշգրիտ ճնշման վառարան, արտադրում է նաև երկաթյա գնդեր ACP, Ախթալայի ԼՀԿ, Դրմբոնի ոսկու ֆաբրիկա և այլ ընկերությունների համար: 2011 թվականին ընկերության արտադրանքի ծավալը 2010 թվականի համեմատ աճել է շուրջ **70 տոկոսով:** Ընկերությունն իր արտադրատեսակներն արտահանում է նաև արտերկիր, իսկ 2011 թվականին արտերկրից ներկրված սարքավորումներով թողարկել է 2011 փորձնական նմուշի բարձրակարգ մինի տրակտոր՝ նախատեսված դաշտային աշխատանքների, փոքր տնտեսությունների և ջերմոցների համար:

Էջմիածնում գտնվող **«Ռաստր գործարան»** ընկերությունը արտադրում է միացուցիչներ, որոնք օգտագործվում են զանազան սարքերում և հիմնականում արտահանվում են Ռուսաստանի Դաշնություն՝ ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկություններ: 2011 թվականին ընկերության արտադրական ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ **20 տոկոսով**:

Արմավիրում 2010 թվականին 1999 թվականի համեմատ եռակի ավելացել է մանրածախ առևտրի շրջանառությունը: Ճգնաժամային համարվող 2010 թվականին Արմավիրում գրեթե նույնքան առևտուր է կատարվել, որքան 1999-2001 թվականների երեք տարիներին:

Առևտրի կազմակերպումը դարձել է ավելի արդյունավետ: 2000 թվականին մարզում գործող թվով շուրջ **1.5 անգամ** ավելի մանրածախ առևտրի օբյեկտները գրեթե երեք անգամ պակաս առևտուր էին անում, քան 2010 թվականին:

Արմավիրում գործող շուրջ 200 խանութները ճգնաժամային 2011 թվականին **նույնքան առևտուր** են արել, որքան մարզի բոլոր խանութները 1998-2001

2007-2010 թվականներին Արմավիրում նույնքան մանրածախ առևտուր է կատարվել, որքան 1998-2006 թվականների ինը տարիներին:

2011 թվականին Արմավիրում գործող խանութների առևտրի շրջանառության ծավալը 2002 թվականի համեմատ հնգապատիկ ավելի է:

թվականների չորս տարիներին կամ 2002-2006 թվականների հինգ տարիներին միասին վերցրած:

2011 թվականին Արմավիրում մանրածախ առևտրի շրջանառությունը ավելին էր, քան 1999 թվականին Վայոց Ձորում, Արագածոտնում, Գեղարքունիքում, Տավուշում, Սյունիքում և Արարատում միասին վերցրած:

Սպառողական ապրանքների շրջանառությունը ՀՀ մարզերում 2011թ. (մլն. դրամ)



Մանրածախ առևտրի շրջանառությունը Արմավիրի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



2010 թվականին Արմավիրում գործում էին **քառակի ավելի** սպառողական ապրանքների շուկաներ, քան 1998 թվականին: 2010 թվականին Արմավիրում գործում են նույնքան սպառողական ապրանքների շուկաներ, որքան Վայոց Ձորի, Արագածոտնի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում միասին:

2010 թվականին բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը 2006 թվականի համեմատ կրկնապատկվել է, 2001 թվականի համեմատ՝ եռապատկվել:

Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը Արմավիրում (դրամ)



Արմավիրի սպառողական ապրանքների շուկաներում առևտրի շրջանառությունն ամենամեծն է հանրապետության մարզերում: 2011 թվականին այն ավելին էր, քան հանրապետության յոթը մարզերում միասին վերցրած:

2010 թվականին վերաբացվեց **Արդշինինվեստբանկի** վերանորոգված և բարեկարգված «Արմավիր» մասնաճյուղը, որը հագեցած է ժամանակակից որակյալ տեխնիկայով և հաճախորդներին մատուցում է արագ և հուսալի բանկային ծառայություններ՝ ավանդների ընդունում, դրամական փոխանցումների սպասարկում, կոմունալ և այլ վարձավճարների գանձում, վարկերի տրամադրում և այլն: 2010 թվականին մասնաճյուղի վարկային պորտֆելը կազմել է շուրջ **1 մլրդ դրամ**:

Արմավիրի մարզպետարանի կայքը Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կողմից 2010 թվականին իրականացված ՀՀ պետական մարմինների տեղեկատվության մատչելիության հետազոտության արդյունքներով ՀՀ մարզերի թվում ճանաչվել է **լավագույնը**, որպես հասարակության տեղեկատվական պահանջները առավել լավ բավարարող և քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու ունակ կայք:

Անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների մակարդակն Արմավիրի մարզում **ամենացածրերից է** և կազմում է հանրապետության արտանետումների 0.1%-ը: Արտանետումները 1999 թվա-

Մթնոլորտային արտանետումներն ու դրանց դիմաց ստացվող բնօգտագործման վճարները Արմավիրի մարզում



կանի համեմատ կրճատվել են գրեթե յոթապատիկ, մինչդեռ մեկ բնակչի հաշվով բնապահպանական և բնօգտագործման վճարները 2010 թվականին 1999 թվականի համեմատ ավելացել են **1.5 անգամ:**

Հատկանշական է, որ Արմավիրը Հայաստանի միակ մարզն է, ուր տնտեսությունը զարգացել է մեծապես առանց ընդերքի շահագործման:

Արմավիրի մարզում ատոմային էներգետիկայի զարգացման և բնակչության անվտանգության ապահովման որակապես նոր փուլ է գործող ատոմակայանի փակումը և նոր՝ անվտանգության **անհամեմատ բարձր երաշխիքներ ապահովող** ատոմակայանի կառուցումը Մեծամորում:

Արմավիրի մարզում 2001 թվականի համեմատ արտաքին առևտրի ծավալները մեծացել են **տասնապատիկ**: Նույն ժամանակահատվածում արտաքին առևտրի ծավալի միջին հանրապետական ցուցանիշը քառապատկվել է:

2010 թվականին Արմավիրի մարզից արտահանումը՝ ավելի քան **16.5 միլիոն ԱՄՆ դոլար ծավալով, ավելի մեծ էր, քան Թուրքիայի Երզինջան (Երզնկա), Բայբուրթ (Բաբերդ), Կարս, Արդահան, Բիթլիս, Բինգյոլ և Թունջելի**

2010 թվականին Արմավիրի արտաքին առևտրի ծավալները ավելի մեծ էին քան 2000-2005 թվականներին միասին վերցրած:

Արտաքին առևտրի ծավալները Արմավիրի մարզում (հազ. ԱՄՆ դոլար)



հյուսիս-արևելյան և կենտրոնական նահանգներինը միասին վերցրած: Արմավիրի մարզի արտահանման ծավալները 2010 թվականին ավելին էին, քան Մուշ նահանգինը և գրեթե նույնքան, որքան Վանինը:

Ենթակառուցվածքները

Արմավիրի մարզը գազաֆիկացման ցուցանիշով հանրապետության **առաջատարներից է**: Արմավիրի մարզի գազի բաշխիչ գործող ցանցը հանրապետությունում ամենաերկարն է՝ **1,669 կմ**: 2011 թվականին 2000 թվականի համեմատ գազի բաշխիչ ցանցի երկարությունը Արմավիրում ավելի քան եռապատկվել է: Արմավիրի մարզում գազի բաշխիչ ցանցի ավելի քան երեք քառորդը գտնվում է գյուղական բնակավայրերում: Հանրապետության գյուղական բնակավայրերում գտնվող գազի բաշխիչ ցանցի երկարության մեկ հինգերորդը բաժին է ընկնում Արմավիրին:

Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Արմավիրի մարզում (կմ)

Արմավիրում բնական գազից օգտվում են ավելի քան **46,700** բնակարանների և բնակելի տների բնակիչներ: Արմավիրում գազաֆիկացված է բնակարանների և բնակելի տների ավելի քան **70 տոկոսը**, իսկ Արմավիրի գյուղական համայնքներում բնակարանների և բնակելի տների 60 տոկոսը:

Արմավիրի մարզի բնակիչների ու ձեռնարկությունների **սպառած գազի ծավալները 2001-2010 թվականներին քառապատկվել են**, 2010 թվականին



հասնելով տարեկան 188 միլիոն խորանարդ մետրի: 2007-2010 թվականների չորս տարում Արմավիրի բնակիչներն ու ձեռնարկությունները սպառել են ավելի մեծ ծավալով գազ, քան 1995-2006 թվականներին՝ 12 տարում:

Արմավիրի մարզի ջրամատակարարման համակարգում իրականացված ներդրումային կապիտալ ծրագրերի արդյունքում զգալիորեն բարձրացել է խմելու ջրի որակը, նվազել են խմելու ջրի կորուստները: Այսպես, 2010 թվականին արմավիրցիները սպառել են գրեթե երկու անգամ ավելի քիչ ջուր, քան 2002 թվականին:

2010 թվականին Արմավիրի մարզի քաղաքների բարեկարգված փողոցների, անցումների երկարությունը 2001 թվականի համեմատ ավելացել է ավելի քան **2.5 անգամ**:

2007-2011 թվականներին Արմավիրի մարզի 6 գյուղական՝ Ջանֆիդա, Երասխահուն, Փշատավան, Մարգարա, Արազափ և Վարդանաշեն համայնքներում և Արմավիր քաղաքում իրականացվել են համայնքների գազաֆիկացման, գազատարերի կառուցման, գազամատակարարման ցանցերի վերանորոգման

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը 2011 թվականին 2002 թվականի համեմատ եռապատկվել է, իսկ 1997 թվականի համեմատ՝ վեցապատկվել:



մեծածավալ աշխատանքներ: Գումարային առումով դրանց ֆինանսավորումը երկրորդն է Շիրակի մարզից հետո: Մարզում ընդհանուր առմամբ իրականացվել են շուրջ **1.65 միլիարդ դրամի աշխատանքներ**: Արմավիրի մարզի տասնհինգ գյուղական և քաղաքային համայնքներում շուրջ **1 միլիարդ դրամ** ծավալով կապիտալ ներդրումների շնորհիվ կառուցվել և վերանորոգվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերը: Կառուցվելու է Մեծամորի մաքրման կայանը:

2007-2011 թվականներին **շուրջ 1.45 միլիարդ դրամ ծավալով ներդրումների արդյունքում** հիմնանորոգվել են մարզի ավելի քան քսան գյուղական համայնքները կապող ճանապարհները, համայնքները մարզկենտրոնին և մայրաքաղաքին կապող մայրուղիները, բարեկարգվել են գյուղական և քաղաքային համայնքների փողոցները, Արմավիր քաղաքում բարեկարգվել է

«Մինչև վերանորոգելը պետք է տեսնեիք, որ պատկերացնեիք, թե երթևեկությունն ինչպիսին էր: Էստեղ երթևեկություն ընդհանրապես չկար: Վերանորոգումից հետո ոչ միայն երթևեկությունն է կարգավորվել, այլև հրաշալի է պարզապես: Կապը մյուս թաղամասերի հետ դարձել է շատ դյուրին: Սա Արմավիր քաղաքի ամենամեծ թաղամասն էր, որ ճանապարհ չլինելու պատճառով կտրված էր կենտրոնից: Փողոցը կառուցելուց հետո բնակարանների գները մեկից բարձրացան»:

Գևորգ Առաքելյան, Արմավիրի մարզ

«Ցեխից, կեղտից, փոշուց ժողովուրդը փրկվել է: Լուսավորություն էլ կա: Մի խոսքով դրական երևույթ է, որ Գարեգին Նժդեհի փողոցը ասֆալտապատվեց»:

Վալերի Աղասյան, Արմավիրի մարզ

Քաղաքների փողոցների, անցումների ընդհանուր երկարությունը Արմավիրի մարզում (կմ)



Բաղրամյան պողոտան: Վերականգնվել է Հ17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհը, որի երկարությունը կազմում է **24,5 կմ**:

Արմավիրի մարզում 2010 թվականին 2001 թվականի համեմատ քառակի ավելացել է բեռնաշրջանառությունը:

2010 թվականին 1998 թվականի համեմատ քառակի ավելացել է նաև ուղևորաշրջանառությունը՝ կազմելով ավելի քան 75 միլիոն ուղևոր-կիլոմետր. մեկ արմավիրցին, անցնելով այս ճանապարհը, կհատեր Երկրից Արև հեռավորության կեսը:



Արմավիր-Երևան և Արմավիր-Արագած ուղղություններով 2009 թվականին գործարկվեց տակտային ուղևորատար էլեկտրագնացքը: Արմավիրից Երևան և հակառակ ուղղությամբ այժմ հնարավոր է հասնել 50 րոպեում, վճարելով 300 դրամ, ինչը մրցակցություն է ստեղծում ավտոմոբիլային տրանսպորտի հետ և զսպում ուղևորափոխադրման գների աճը մարզում: Երևանից գնացքները մեկնում են յուրաքանչյուր 3 ժամը մեկ՝ օրական 4 անգամ, իսկ երկաթգծի ծառայություններից օգտվողների գրեթե մեկ հինգերորդն ուսանողներ են, ովքեր օգտվում են 50% զեղչի իրավունքից:

Տունը

Արմավիրի մարզում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսն **ամենամեծն է** Հայաստանի մյուս մարզերի համեմատ և զիջում է միայն Երևանին: Արմավիրի մարզում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Երևանի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսի գրեթե կեսն է:

2011 թվականին Արմավիրի մարզում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը **կրկնապատկվել է** 1998 թվի համեմատ: Սա աճի ամենամեծ տեմպն է Հայաստանում (աճի միջին հանրապետական ցուցանիշը 50% է, Երևանում՝ 32%):

Արմավիրի մարզի գյուղական համայնքների բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը ամենամեծն է Հայաստանում և կազմում է երկրի գյուղական

բնակավայրերի բնակարանային ֆոնդի մակերեսի շուրջ **մեկ հինգերորդը**: 2011 թվականին 1998 թվականի համեմատ այս ցուցանիշը նույնպես **կրկնապատկվել է**:

Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով Արմավիրի մարզում 2011 թվականին 1998 թվականի համեմատ **եռապատկվել է՝** կազմելով շուրջ **38 քառակուսի մետր**: Սա 30 տոկոսով ավել է, քան հանրապետության միջին ցուցանիշը և ավելի քան **80 տոկոսով ավելի**, քան Երևանի ցուցանիշը (20.5 քմ): Գյուղական վայրերում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2011 թվականին կազմել է **44 քմ**.:

Ընդհանուր բնակարանային մակերեսով մեկ բնակչի ապահովվածությամբ Արմավիրի մարզը երկրորդն է Հայաստանում՝ Վայոց Ձորից հետո:

Նախորդ տասնամյակում աշխուժացել է նաև անշարժ գույքի շուկան: Այս-

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Արմավիրի մարզում 2011թ. (քմ)



պես, 2010 թվականին, 2002 թվականի համեմատ բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ իրականացված առք ու վաճառքի գործարքների քանակն Արմավիրում ավելացել է 40 տոկոսով, բնակելի տների (առանձնատների) առք ու վաճառքի գործարքների քանակը՝ **6.5 անգամ**: Հողերի (այդ թվում՝

Բազմաբնակարան շենքերի բնակարանների թիվը 2011 թվականին 2001 թվի համեմատ ավելացել է ավելի քան 28 անգամ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսի աճը Հայաստանի Հանրապետությունում 1998-2011թթ.



Բնակարանային ֆոնդը Արմավիրի մարզում



գյուղատնտեսական նշանակության) առք ու վաճառքի գործարքների քանակը 2010 թվականին 2002 թվականի համեմատ ավելացել է քառապատիկ՝ հասնելով գրեթե 2,000-ի:

Արմավիրի մարզի համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների թիվը 2010 թվականին 2004 թվականի համեմատ **կրկնապատկվել է**:

Արմավիրի մարզում վերջին հինգ տարիների ընթացքում գերազանցապես հանրային միջոցների հաշվին բնակարաններով են ապահովվել **265 ընտանիքներ**, Դալարիկ, Ակնաշեն և Ոսկեհատ համայնքներում, Արմավիր, Էջմիածին և Մեծամոր քաղաքներում հիմնանորոգվել են տասնյակ բազմաբնակարան

շենքերի տանիքները, շենքերի մուտքերն ու աստիճանավանդակները, բազմաբնակարան բնակելի վթարային շենքերի բնակիչների համար ձեռք են բերվել բնակարաններ:

Աշխատանքը

Աշխատողների միջին անվանական աշխատավարձը Արմավիրի մարզում 2010 թվականին 2005 թվականի համեմատ **կրկնապատվել** է, 2002 թվականի համեմատ՝ **քառապատկվել,** իսկ 1998 թվականի համեմատ՝ **յոթնապատկվել**:

Միջին անվանական աշխատավարձն Արմավիրում ավելի բարձր է, քան Եվրամիությանը սահմանակից Մոլդովայում:

2007-2010 թվականներին միջին անվանական աշխատավարձի **ամենամեծ աճը** հանրապետության մարզերում գրանցվել է Արմավիրում:

Հանրապետության մարզերի թվում տնտեսության մեջ ամենաշատ զբաղվածները Արմավիրում են՝ ավելի քան **120 հազար մարդ**: Հայաստանում յուրաքանչյուր տասներորդ զբաղված մարդն արմավիրցի է:

Գյուղատնտեսության ոլորտում ամենամեծ թվով զբաղվածներն Արմավիրում

Յոթանասունամյա Էդուարդ Խաչատրյանը «Ամստեր-ֆլաուերս» հայ-հոլանդական ընկերությունում աշխատում է արդեն տասնմեկ տարի: «Գիշերային տնօրեն եմ, պահակ չեմ»,— կատակում է Էդուարդ պապիկը: Առաջարկը՝ աշխատել պահակ ընկերությունում, ստացել է շատ պատահական:

«Պարապ էի, պապիրոսի փող չունեի, անցել էի թոշակի ու աշխատանքի հույս էլ չունեի: Եվ հանկարծ զանգ ստացա, թե եկեք էս հասցեով: Տիկնոջս հետ եկանք նշված հասցեով ու ստացա հենց էս աշխատանքի առաջարկը: Ավտո տրամադրեցին, յորղան-դոշակս բերեցի, ըսպես տնավորվա: Դժգոհ չեմ, կնիկս էլ դժգոհ չէ, մանավանդ ռոճիկ ստանալու օրերին,— Էդուարդ պապը ծիծաղում է,— էստեղ նորմալ վարձատրում են, գոհ եմ: Իմ տարիքում աշխատանք գտնել պահակի ու էս տիպի վարձատրությամբ մեծ բան է»:

Ասում է, որ կիրառական արվեստի չորս մասնագիտության է տիրապետում: Գյումրիի գեղարվեստի ուսումնարանում է աշխատել ժամանակին: Հիմա էլ պահակի գործն է փորձում «գեղարվեստորեն» անել: Շատ են օգնում բնածին հումորն ու տնօրինության բարեհաճ վերաբերմունքը: «Էնքան աշխատավարձ եմ ստանում, որ համ ես եմ ապրում, համ զավակներիս եմ հասնում»,— հպարտորեն շեշտում է Էդուարդ Խաչատրյանը:

Աշխատողների միջին ամսական աշխատավարձը Արմավիրում (դրամ)



Հանրապետության մարզերում ոչ պետական հատվածում ամենամեծ թվով զբաղվածներն Արմավիրում են:

են՝ շուրջ իննսուն հազար մարդ: Արմավիրցիների շուրջ երեք քառորդը (յուրաքանչյուր չորսից երեք արմավիրցի) զբաղված են գյուղատնտեսության ոլորտում:

Եթե Արմավիրը լիներ հարյուր հոգանոց բնակավայր, ապա նրանցից 74-ը կզբաղվեին գյուղատնտեսությամբ, 19-ը՝ ծառայությունների ոլորտում, 2-ը շինարարություն կանեին, իսկ 5-ը՝ արդյունաբերության մեջ:

Զբաղվածների քանակը ՀՀ մարզերում 2010թ. (հազ. մարդ)



Ընդ որում, եթե Երևանում յուրաքանչյուր 10 աշխատողից 3-ը զբաղված են պետական հատվածում, ապա 10 աշխատող արմավիրցիներից 9-ը զբաղված են ոչ պետական հատվածում:

Արմավիրի մարզի ոչ պետական հատվածում զբաղված է այնքան մարդ, որքան հանրապետության բոլոր մարզերի պետական հատվածում:

Աստիճանականորեն նվազել է պետական հատվածում զբաղվածների թիվը և զուգընթաց աճել է ոչ պետական հատվածում զբաղվածների թիվը (2010 թվականին 2002 թվականի համեմատ՝ շուրջ 20 տոկոսով):

Կրթությունը

Հանրապետության գյուղական յուրաքանչյուր 7 նախադպրոցական հաստատություններից մեկը գտնվում է Արմավիրում:

Արմավիրի 33 գյուղական նախադպրոցական հաստատություններում 2010 թվականին սովորում էին **1.5 անգամ ավելի** երեխա, քան 2001 թվականին գործող **1.5 անգամ ավելի** գյուղական նախադպրոցական հաստատություններում (**51**):

Արմավիրում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը գյուղական բնակավայրերում 2010 թվականին 2002 թվականի համեմատ կրկնապատկվել է (ամենամեծ աճը հանրապետությունում):

2002-2010 թվականներին գյուղական վայրերում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվի աճի շուրջ **30 տոկոսը** բաժին է ընկնում Արմավիրի մարզին: 2002 թվականի համեմատ՝ 2010 թվականին Արմավիրի քաղաքային և գյուղական բնակավայրերում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվն աճել է ավելի քան **40 տոկոսով**:

1996 թվականի նոյեմբերին Հայաստանի բոլոր մարզերի 54 մանկապարտեզների հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ երեխաներին մանկապարտեզ չբերելու հիմնական պատճառը ծնողների վճարունակ չլինելն էր (**45%**), մանկապարտեզներում վատ սնունդը (**12,5%**) և ոչ նորմալ ջեռուցումը

Նախադպրոցական հաստատությունների քանակը Արմավիրի մարզում 2003-2010թթ.



ՆԴՀ-ներում առկա տեղերի քանակը Արմավիրի մարզում 2003-2010թթ.



(**20%**): Վերջին խնդիրը հատկապես կարևոր է. Արմավիրի մարզում գործող նախադպրոցական հաստատությունների շուրջամյա անխաթար գործունեությունը հնարավոր է ապահովել միայն պատշաճ ջեռուցման պարագայում:

Արմավիրում նախադպրոցական հաստատությունների քանակը 2003-2010 թվականներին կրճատվել է 30 տոկոսով, սակայն միաժամանակ, դրանցում տեղերի ընդհանուր քանակը 2010 թվականին 2003 թվականի համեմատ ավելացել է **ավելի քան 70 տոկոսով**:

2010 թվականին 2002 թվականի համեմատ մեկ նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների թիվը կրկնապատկվել է՝ 40-ից հասնելով շուրջ 80-ի:

Եթե նախադպրոցական հաստատությունների մանկավարժների թվաքանակը Արմավիրի մարզում 1998-2004 թվականներին կրճատվել է ավելի քան **40 տոկոսով**, ապա 2004-2010 թվականներին այն աճել է ավելի քան **20 տոկոսով**:

Նախադպրոցական հաստատություններում երեխաների հիվանդացության դեպքերը 2010 թվականին 2002 թվականի համեմատ նվազել են **քառապատիկ**: Նախադպրոցական հաստատություն հաճախող հարյուր երեխայի հաշվով հիվանդացության դեպքերի թիվն Արմավիրի մարզում ամենափոքրն է. շուրջ 20 դեպք, այն դեպքում, երբ Երևանում նախադպրոցական հաստատություն հաճախող 100 երեխայի հաշվով հիվանդացությունների դեպքերի թիվը 60 է, իսկ հանրապետության միջինը՝ 67: Նախադպրոցական հաստատություններ հաճախող 100 երեխայի հաշվով հիվանդացության դեպքերի թիվը Արմավիրում 2010 թվականին 2002 թվականի համեմատ նվազել է ավելի քան **հինգ անգամ**:

Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում մանկավարժների թվի կտրուկ կրճատումը 2000-2004 թվականներին 2005-2011 թվականներին փոխարինվել է **աստիճանական աճով**: Մանկավարժների աշխատավարձերի աստիճանական բարձրացումը թերևս էական դեր է ունեցել այս առաջընթացում. 1996 թվականին ուսուցչի աշխատավարձի ամսական դրույքաչափը կազմում էր **3760 դրամ**, որն աղքատության պարենային գծի մոտ կեսն էր: Վարձատրության նման պայմաններում հանրակրթական դպրոցների մանկավարժների արտահոսքն անխուսափելի էր:

Մանկավարժների թվաքանակի փոփոխությունը Արմավիրի մարզում



Արագած համայնքի մանկապարտեզում. ձմեռ 2012

Նախադպրոցական հաստատություններում երեխաների հիվանդացության դեպքերի քանակը, հաճախող 100 երեխայի հաշվով ՀՀ մարզերում 2010թ.



1996 թվականի տվյալներով երեխաների միայն 1/3-ն ուներ անհրաժեշտ դասագրքեր, որի հիմնական պատճառը դրանց անմատչելիությունն էր: Կառավարության ներդրած համակարգային լուծումների արդյունքում հանրակրթական դպրոցների աշակերտների դասագրքային ապահովման **խնդիրը լուծված է** գրեթե ամբողջությամբ:

Դպրոցաշինության կապիտալ ծախսերը ՀՀ մարզերում 2007-2011թթ. (մլն. դրամ)



2007-2011 թվականներին ՀՀ կառավարության իրականացրած կապիտալ ներդրումների ավելի քան **մեկ հինգերորդը** իրականացվել է կրթության ոլորտում՝ ծախսված յուրաքանչյուր հինգ դրամից մեկը: Դպրոցաշինությանը հատկացված ներդրումների ծավալով Արմավիրը հանրապետությունում ամենամեծ հատկացումներ ստացած մարզերի եռյակում է: 2007-2011 թվականներին Արմավիրի մարզում իրականացված շուրջ **6.2 միլիարդ դրամի** աշխատանքների արդյունքում, մարզի **56 համայնքներում** նախագծվել, կառուցվել, հիմնանորոգվել ու վերանորոգվել են բազմաթիվ կրթօջախներ՝ մանկապարտեզներ, հանրակրթական և գիշերօթիկ, արվեստի և երաժշտական դպրոցներ, տեղադրվել կամ վերանորոգվել են դրանց ջեռուցման ու ջերմամեկուսացման համակարգերը: Նոր դպրոցներ և մասնաշենքեր են կառուցվել, մասնավորապես, Այգեկ, Նորավան, Արտամետ, Գայ համայնքներում, վերանորոգվել ու կահավորվել է Արմավիր քաղաքի շախմատի դպրոցը, Արագած համայնքում կառուցվել է մանկապարտեզ:

«Մենք նոր ենք տեղափոխվել նոր դպրոց: Պայմաններն էնքան լավն են, որ ուզենք չուզենք պիտի սովորենք»:

Տաթևիկ Փիրումյան, աշակերտուհի, Արմավիրի մարզ

«Մեր նոր դպրոցի պայմաններն անչափ տարբերվում են հին դպրոցի պայմաններից: Սա իսկապես նվեր է և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների համար: Ավելի հաճույքով ենք մտնում դպրոց, ավելի ոգևորված: Պայմանները տրամադրում են դասապրոցեսն էլ ավելի լավ վարելու համար: Կարող եմ ասել, որ սա 21-րդ դարի դպրոց է»:

Վեհանուշ Մարուքյան, ուսուցչուհի, Արմավիրի մարզ

Նորավանի նոր դպրոցը

Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի համակարգչային դասարանը



Արմավիր քաղաքի արվեստի նորաբաց դպրոցում

2009 թվականին վերաբացվեց Արմավիր քաղաքի արվեստի հիմնանորոգված դպրոցը: 500 սանի համար նախատեսված երկհարկանի դպրոցն այժմ ջեռուցվում է և տարին բոլոր կրթություն ապահովում երիտասարդ արմավիրցիներին:

Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի միջնակարգ դպրոցը, աշխարհի հազար դպրոցների թվում, մասնակցում է **«Դպրոցներ. ապագայի գործըն-**

Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշակերտների թվաքանակի փոփոխությունն Արմավիրի մարզում ըստ ժամանակահատվածների (աշակերտ)



«Արմավիրի շախմատի վերանորոգված դպրոցը կնպաստի շախմատիստների նոր սերնդի ձևավորմանը: Նախկինում այս դպրոցը բազամթիվ շնորհալի սաներ է տվել: Հուսով եմ, որ այդպես կլինի նաև ապագայում»:

Լևոն Արոնյան, միջազգային գրոսմայստեր, աշխարհի գավաթակիր, աշխարհի թիմային առաջնության հաղթող, կայծակնային շախմատի աշխարհի չեմպիոն:

կերներ» համաշխարհային ծրագրին և համագործակցում է Գերմանիայի Գյոթեի ինստիտուտի հետ:

2011 թվականին Մյասնիկյան համայնքում բացվեց **նորակառույց դպրոց. ավելի քան չորս ու կես հազար քառակուսի մետր ընդհանուր մակերեսով** շենքում կառուցվել և կահավորվել են, 30 դասարան, լաբորատորիան, մեդիա կենտրոնը, բացօթյա դասարանը, գրադարանը, մարզադահլիճը՝ ցնցուղներով, հանդիսությունների սրահը: Դպրոցում աշխատում է շուրջ **45 մանկավարժ** և սովորում է **600 աշակերտ**:

Արմավիրի մարզի 23 դպրոց ստացել են **համակարգիչներ**, ինչը նպաստել է մարզի քաղաքային և գյուղական համայնքներում կրթության որակի բարձրացմանը:

Եթե Արմավիրի մարզում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշակերտների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում 2001-2004 թվականներին կրճատվել է 44-ով, ապա 2005-2011 թվականներին սովորողների թիվն **աճել է 284-ով**:

Արմավիրի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշակերտների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգում 2011 թվականին 2001 թվականի համեմատ կրկնապատկվել է: 2010 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հաստատություններում սովորողների թիվը մեծացել է շուրջ **35 տոկոսով**:

Առողջապահությունը

Առողջության պահպանման առաջնային օղակը ամենակարևորն է և այստեղ Արմավիրը կրկին **առջևում է:**

Արմավիրի մարզում գործում են **ամենամեծ թվով** ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկները՝ **61**:

Եթե մինչև 2003 թվականը տարեցտարի ավելի ու ավելի քիչ արմավիրցիներ են հաճախել պոլիկլինիկաներ, ինչը վկայում է սեփական առողջության հանդեպ վերաբերմունքի վատթարացման մասին, ապա 2004-2010 թվականներին հաճախումների թիվն աճել է: 2010 թվականին 2003 թվականի համեմատ հաճախումների թիվն աճել է գրեթե **կրկնակի**՝ հասնելով տարեկան 855 հազար հաճախման: Սա այն պարագայում, երբ 10 հազար բնակչի հաշվով բժիշկների, միջին բուժանձնակազմի թվաքանակն ու հիվանդանոցային մահճակալների քանակն Արմավիրի մարզում ամենափոքրն են Հայաստանում: Միաժամանակ, 10 հազար բնակչի հաշվով Արմավիրում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների **թիվն ամենամեծն է**:

Մեկ շնչի հաշվով բուժհաստատություններ հաճախումների թիվն Արմավիրում 2001 թվականի համեմատ **կրկնապատկվել է**:

2007-2011 թվականներին Արմավիրի մարզի 14 գյուղական համայնքներում ՀՀ կառավարության ջանքերով վերանորոգվել են բժշկական ամբուլատորիաներ, բուժկետեր, առողջության պահպանման կենտրոններ, Մեծամոր քաղաքում հիմնանորոգվել է հիվանդանոցի տանիքն ու ջեռուցման ցանցը:
ՀՀ նախագահի հռչակած՝ մարզերի համաչափ զարգացման քաղաքականության շրջանակներում 2010 թվականին ՀՀ կառավարությունը հիմնովին վերանորոգել և լիովին արդիականացրել է Արմավիրի բժշկական կենտրոնը: Շուրջ չորս հազար քառակուսի մետր մակերես ունեցող, կահավորված և ժամանակակից բժշկական սարքավորումներով հագեցված հիվանդանոցն ու պոլիկլինիկան համապատասխանում են եվրոպական չափանիշներին և ոչնչով չեն զիջում մայրաքաղաք Երևանի լավագույն բժշկական կենտրոններին: Նորաբաց կենտրոնն իրականացնում է նաև դիալիզի բուժծառայություն: Մարզի հիվանդները խիստ մասնագիտական բուժումը ստանում են տեղում և մայրաքաղաք մեկնելու կարիք չունեն: Բժշկական կենտրոնում աշխատում է շուրջ հարյուր բժիշկ, այդ թվում՝ մայրաքաղաքից պարբերաբար այցելող մասնագետներ և երկու հարյուր հիսուն միջին բուժաշխատող:

2010 թվականին Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքում **բացվեց «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոնը**: Կենտրոնն այժմ ունի ախտորոշման ժամանակակից սարքավորումներ, այդ թվում՝ բիոքիմիական բարձրակարգ լաբորատորիա և ռենտգեն ծառայություն, գործում է շտապ օգնության

Արշալույս համայնքի նոր ամբուլատոր կենտրոնը

Նորածին արմավիրցին բժիշկների խնամքի տակ Արմավիր քաղաքի նորաբաց բժշկական կենտրոնում

ծառայություն, արդիականացված ատամնաբուժարան, հղի կանանց ու երիտասարդ մայրերի համար՝ մոր և մանկան առողջության սենյակ: Կենտրոնում աշխատում են շուրջ հիսուն մասնագետ՝ ընտանեկան բժիշկներ, մանկաբարձ-գինեկոլոգ, մաշկավեներաբան, ուռուցքաբան, հոգեբույժ, նյարդաբան, թոքաբան,



ակնաբույժ, միջին բուժաշխատողներ և սպասարկող անձնակազմ: Կենտրոնն ի զորու է սպասարկելու Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանի ավելի քան 20 հազար բնակչի:

«Անհետաձգելի բուժօգնություն չէր կարելի իրականացնել լրիվ ծավալով: Այսինքն, չկային այնպիսի բուժգործիքներ, որ կարողանայինք պահանջված ծառայությունը մատուցել: Հիմա այդ խնդիրը վերացել է Արմավիրի բժշկական կենտրոնում»:

Նշան Գևորգյան, բժիշկ, Արմավիրի մարզ

«Սանհանգույցից սկսած, ջեռուցումից վերջացրած ամեն ինչ արված է: Հաճելի է թե՛ հիվանդի համար՝ այստեղ պառկել բուժվելը, թե՛ բուժանձնակազմի համար՝ աշխատելը»:

Վարդուհի Վարդանյան, բուժքույր

Մշակույթն ու սպորտը

Արմավիրի մարզում թանգարաններ այցելուների թիվը 2010 թվականին 1998 թվականի համեմատ աճել է ավելի քան **2.5 անգամ**: Արմավիրի մարզի թանգարաններն ունեցել են ավելի մեծ թվով այցելուներ, քան Վայոց Ձորի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արագածոտնի, Կոտայքի մարզերի թանգարանները միասին վերցրած:

Արմավիրի մարզում մշակութային օբյեկտների շինարարության և վերանորոգման աշխատանքների վրա ծախսվել է մարզերի միջինից կրկնակի անգամ շատ գումար: Այս ցուցանիշով Արմավիրը երկրորդ մարզն է Արագածոտնից հետո:

Թանգարաններ այցելուների թվաքանակը Արմավիրի մարզում (հազ. մարդ)



2007-2011 թվականներին վերանորոգվել են մշակույթի տներ Աղավնատուն, Սարդարապատ, Բամբակաշատ, Առատաշեն, Խանջյան, Այգեշատ, Լուկաշին, Արաքս, Ոսկեհատ, Մյասնիկյան, Դալարիկ և այլ համայնքներում, Արմավիր քաղաքի մարզային գրադարանը, Էջմիածնում Հովի. Հովհաննիսյանի տուն-թանգարանը, Այգեշատի՝ Թարգմանչաց եկեղեցին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կառուցվել է Հայաստանում երկրորդ մատենադարանը, որը մեկտեղել է Մայր Աթոռի բոլոր գրադարաններն ու ձեռագրատունը՝ եկեղեցական միաբանության և Մայր Աթոռ Էջմիածնի հարուստ ֆոնդից օգտվող գիտնականներին լավա-

Մշակույթի ոլորտում իրականացված կապիտալ ծախսերը
ՀՀ մարզերում 2007-2011թթ. (մլն. դրամ)



գույն պայմաններ ապահովելով գիտական աշխատանքների կատարման համար:

Արմավիրի մարզի Արշալույս համայնքում **«Արա և Այծեմնիկ»** ձիասպորտի կենտրոնի մարզադաշտում անցկացվեց նետաձգության Եվրոպայի պատանիների և երիտասարդների գավաթի առաջնությունը, որին մասնակցեցին 125 մարզիկներ 12 երկրներից:

Արմավիրի մարզի Փարաքար համայնքը 2010 թվականին արժանացավ **«Լավագույն գյուղական մարզական համայնք»** մրցանակի:

2007-2011 թվականներին միջազգային և հանրապետական առաջնություններում մրցանակների են արժանացել արմավիրցի ավելի քան 30 ըմբշամարտիկներ, բռնցքամարտիկներ ու ծանրամարտիկներ:

Սոցիալական վիճակը

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ թե՛ ողջ հանրապետության, և թե՛ երկրի առանձին մարզերի վրա: 2008-2009 թվականներին գյուղատնտեսության համար խիստ աննպաստ բնակլիմայական պայմանները բազմապատկեցին ճգնաժամի հասցրած աղետալի վնասները: Իր հացը հիմնականում գյուղատնտեսությամբ վաստակող արմավիրցու ապագան մթագնեց վերահաս աղքատացման ստվերը:

Ահագնացող դժվարությունները, սակայն, չընկճեցին արմավիրցուն: ՀՀ կառավարությունն արեց ամենը՝ հնարավորություն ընձեռելով ճգնաժամի ու երաշտի ճիրաններում մոլորված արմավիրցուն վերականգնել կորուստները սեփական ձեռքերով՝ դժվար օրերին նոր ֆինանսական աղբյուրներից վարկային միջոցների հասանելիություն ապահովելով բազմաթիվ արմավիրցիների համար: Դժվար ժամանակներում օր անգամ **չընդհատվեց** սոցիալական և ֆիզիկական ենթակառուցվածքների շինարարությունը: Ավելի՛ն, սոցիալական նշանակության կապիտալ ծրագրերը դարձան մարզի տնտեսության վերականգնման և տնային տնտեսություններին օժանդակելու կարևոր գործոն:

Շատ աղքատների թիվը 2010 թվականին 2009 թվականի համեմատ կրճատվեց ավելի քան 2.5 անգամ՝ իջնելով 1.4 տոկոսի:

Մարզն աստիճանաբար ուշքի է գալիս ճգնաժամի ցնցումից, վերականգնվում է տնտեսությունը, գալիք օրվա մասին մտահոգությունը մարդիկ վերածում են գործունեության, ակտիվանում են ձեռներեցներն ու տնտեսական կապերը: 21-րդ դարի ծանրագույն համաշխարհային ճգնաժամն անգամ չկարողացավ հետ շպրտել արմավիրցուն իր նվաճած բարձունքներից: Այնուամենայնիվ աղքատության մակարդակը բարձրացավ և 2001 թվականի 53.7 տոկոսից 2008 թվականի նախաճգնաժամային օրերին մինչև **24.5 տոկոս** կրճատված աղքատութ-

Նպաստառու ընտանիքների քանակը Արմավիրի մարզում



յունը 2010 թվականին հասավ **33 տոկոսի**: Ցավոք, Արմավիրի մարզի տնային տնտեսությունների **8.5 տոկոսի** կենսամակարդակը իջավ աղքատության գծից ցածր: Եթե 2008 թվականի նախաճգնաժամային օրերին մարզում շատ աղքատ տնային տնտեսությունները կազմում էին տնային տնտեսությունների **0.7 տոկոսը**, ի տարբերություն 2004 թվականի 6.6 տոկոսի, ապա 2009 թվականին Արմավիրի տնային տնտեսությունների 3 տոկոսը հայտնվեց շատ աղքատների թվում: 2009-2010 թվականներին ՀՀ կառավարության թիրախավորված սոցիալական աջակցության և ֆինանսատնտեսական քաղաքականությունը տվեց շոշափելի արդյունք:

Աղքատության մակարդակը Արմավիրի մարզում (%)



Հատկանշական է, որ 1997 թվականին տնային տնտեսությունների հետազոտության շրջանակներում աղքատության տարածվածության վերաբերյալ հանրապետության բոլոր մարզերի մեջ ամենալավատեսական պատկերացումն ունեցել են արմավիրցիները:

Հայաստանի ժողովուրդը երկու տասնամյակ առաջ դրեց իր պետականության հիմքերը, ձևավորեց պետական ու տնտեսական նոր կառույցներ: Քաղաքական, տնտեսական ու հասարակական դժվարին փոխակերպումների, պատերազմի ու շրջափակման տարիներին իր արյամբ ու քրտինքով պաշտպանեց դրանց գոյության իրավունքը: Հայաստանցին՝ գերազանցությամբ «ավարտելով» պետություն ունեցող ազգերի համար պարտադիր «տարրական դպրոցը», անկախության երկրորդ տասնամյակում կանգնեց որակապես նոր, էությամբ ավելի դժվար և նուրբ մարտահրավերների առջև, որոնց լուծումը, թերևս, անհնար էր թվում դեռ մեկ տասնամյակ առաջ:

Հայաստանի պետական կառույցները, հասարակությունն ու քաղաքական ուժերը, երկրի տնտեսությունն իրենց նախաձեռնությամբ առաջ մղող գործարարները անկախության երկրորդ տասնամյակում կայացրին և ամբողջականացրին Հայաստանում շուկայական տնտեսության, ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության սյուները: Կայացրին՝ դժվարագույն փորձություններ հաղթահարելով: Փորձություններ, որոնք ընդամենը մեկ տասնամյակ առաջ կարող էին ոչնչացնել հայոց անկախ պետականությունը: Քսանամյա Հայաստանը դիմակայեց հասարակական, քաղաքական ու տնտեսական փոխակերպումների այնպիսի փորձությունների, որոնց թերևս չէր կարող դիմակայել տասնամյա Հայաստանը՝ անգամ ազգային միասնության ու ազատագրական պայքարի թեժ օրերին: Սակայն պետականության և տնտեսության ամրության հսկայական պաշար կուտակած Հայաստանը դիմացավ փորձությունների, որոնք ավելի ամրացրին ազգային պետականության կտա-

վը, հողը դարձրին պետություն, բնակչին՝ քաղաքացի, ձեռներեցին՝ գործարար, իսկ իշխանավորին՝ պաշտոնյա:

Երկրորդ տասնամյակի մարտահրավերները հաղթահարած Հայաստանը դիմացավ փորձությունների, որպեսզի իր անկախության երրորդ տասնամյակում լուծի էլ ավելի բարդ ու դժվարին խնդիրներ, լուծի ավելի մեծածավալ խնդիրներ, քանզի սա է զարգացման տրամաբանությունը:

Երկրի անցած ու անցնելիք այս ճանապարհը կարելի է կարդալ Արմավիրի մարզի շեներում ու այգիներում, խաղողի հատիկի մեջ ու գործարանի դռներից ներս ու դուրս անող մեքենայի թափքին, արմավիրցու աչքերում, կարդալ արմավիրցի երեխայի համակարգչում, նորածնի աշխարհամուտի ճիչում ու հոր՝ իր զավակին տված խորհուրդներում...

Իրավամբ, մեկ տասնամյակ անց, արմավիրցին ներողամիտ ժպիտով է հետ նայելու երրորդ տասնամյակի ընթացքում, այսօր՝ դեռ անելիք գործերին ու ձեռքբերումներին: Ներդրումներն ու արդյունքները փոքր են երևալու նրա աչքին, իսկ գալիք խնդիրները՝ մեծ: Համեմատելով երրորդ տասնամյակում արվածը նախորդ տասնամյակների գործերի հետ՝ արմավիրցին դրանցում անգամների տարբերություն է գտնելու ու զարմանալու է... Զարմանալու է գյուղատնտեսության խնդիրների լուծման թափից, աշխատանք ստեղծած ու աշխատանք գտած արմավիրցիների թվից, ոռոգելի դարձած մշակահողերի տարածքներից, եվրոպացուն վայել կրթօջախներից ու իր իսկ ձեռքով ավելի բարեկեցիկ դարձած կենսամակարդակի փոփոխություններից...

Այսպես է այսօր, այդպես է լինելու և տասը տարի անց: Եվ գարունները Հայաստանում դեռ շատ երկար սկսվելու են Արմավիրում...

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Արմավիրի մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործընկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Արմավիրի մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը արմավիրցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում:

Երևան - 2012